ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2015 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3405.3 մլն դրամ՝ պլանավորված 3355.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.5 %-ով կամ 50.3 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.9 %-ով կամ ավել 278.5 մլն դրամով:

Փետրվար ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 1864.8 մլն դրամ՝ պլանավորված 1855.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 0.5 %-ով կամ ավել 9.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 9.2 %-ով կամ ավել 157.6 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) են թվով 135 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 1 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 82 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 68.3 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 120 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 86-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 12-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 7-ը՝ գործունեության չծավալման և 15 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում հաստատվել է «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգը, որի շրջանակներում իրականացվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության, չձևակերպված վարձու աշխատողների բացահայտմանն ուղղված լայնածավալ հսկողական միջոցառումներ: Արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման 63 և վարձու աշխատողների չձևակերպման 3 դեպքեր:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 3 վարչական գործ՝ 2.0 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 35 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 74.2 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 91 վարչական գործով սահմանվել է 1.4 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետության հասցված 4.9 մլն դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել են 6211 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5053: Ընդ որում 2016 թվականի հունվարի 1-ից գործարկված էլեկտրոնային համակարգի միջոցով հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներկայացնող հարկ վճարողների թիվը կազմում է 788:

Հաշվետու ամսում ընդունվել է ԼՂՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին թվով 353 հայտարարագիր:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 99 պայմանագիր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 102 վարձու աշխատողի՝ 16.6 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 92 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԼՂՀ կառավարության որոշմամբ փոփոխություններ են կատարվել հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգում:

Ֆինանսների նախարարի հրամաններով հաստատվել է 2016 թվականին հարկային մարմնի աշխատակիցների հետ կայանալիք ուսուցումների ծրագիր-ժամանակացույցը, ԼՂՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային կառավարման զարգացման և

կատարելագործման միջոցառումները, հաշվետվությունների էլեկտրոնային համակարգից օգտվելու ուսուցման կարիք ունեցող հարկ վճարողների հետ ուսուցողական սեմինարների անցկացման ժամանակացույցը, լրացում կատարվել հարկային մարմնի կողմից հավաքագրվող հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման ժամանակացույցում:

Փետրվարի 2-ին կազմակերպվել է ֆինանսների նախարարության 2015 թվականի կատարած աշխատանքների ամփոփմանը նվիրված խորհրդակցություն:

Հաշվետու ամսում կայացել է նաև հարկային վարչարարության բարեփոխումների խորհրդի նիստ:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հարկ վճարողներին սպասարկման գործառույթ իրականացնող 2 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել մեկ հայտարարություն:

Ընթացիկ ամսում գործարկման է հանձնվել Քաշաթաղի շրջանի հարկային տեսչության նոր շենքը՝ նորառոճ սպասարկման սրահով, վերազինված ժամանակակից համակարգչային տեխնիկայով ու անհրաժեշտ այլ պարագաներով:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 439, ելքագրվել՝ 121 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: